ՍԴ3/0003/01/13

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

27 դեկտեմբերի 2013 թվական ք.Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քննարկելով Հովհաննես Աշոտի Հակոբյանի, Էրիկ Միքայելի Սարգսյանի և Գևորգ Վիրաբի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 28-ի որոշման դեմ մեղադրող Կ.Աղաբեկյանի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Սաքունցի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Տ

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի օգոստոսի 6-ի դատավճռով Հովհաննես Աշոտի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի 6 ամիս ժամկետով: Դատարանը որոշել է Հ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) քրեական գործի վարույթը կարճել և քրեական հենապնդումը դադարեցնել՝ արարքի ապաքրեականացման հիմքով:

Նույն դատավճռով Էրիկ Միքայելի Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) և դատապարտվել յուրաքանչյուր դրվագով 3-ական ամիս ժամկետով ազատազրկման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ Է.Սարգսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 ամիս ժամկետով:

Նույն դատավճռով Գևորգ Վիրաբի Մանուկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 4 ամիս ժամկետով:

Վերոհիշյալ դատական ակտի դեմ մեղադրողի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի վերաքննիչ բողոքները ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ մերժվել են, իսկ դատավճիռը Է.Սարգսյանի մասով բեկանվել է ու «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ՝ ամբաստանյալ Է.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) քրեական գործի վարույթը կարճվել և քրեական հետապնդումը դադարեցվել է:

Վճռաբեկ բողոքներ են բերել ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայազորի զինվորական դատախազի պաշտոնակատար, գործով մեղադրող Կ.Աղաբեկյանը և տուժողի իրավահաջորդ Վանո Վարյանի ներկայացուցիչ Ա.Սաքունցը:

Մեղադրող Կ.Աղաբեկյանը վճռաբեկ բողոքում խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 28-ի որոշումը ամբաստանյալ Հ.Հակոբյանի մասով բեկանել և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Մեղադրողը նշել է, որ իր բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Վերլուծելով մեղադրողի բողոքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրողի փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ առկա է գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրողի բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված հիմքերի առկայությունը հիմնավորված չէ:

Տուժողի իրավահաջորդ Վ.Վարյանի ներկայացուցիչ Ա.Սաքունցը վճռաբեկ բողոքում խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը նշել է, որ վճռաբեկ բողոքը բերում է, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի պահանջները:

Վերլուծելով տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի բողոքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքի հեղինակը, հիշատակելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածը, այն հիմնավորելու համար որևէ փաստարկ չի ներկայացրել:

Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը պետք է բովանդակի նույն օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի որևէ կետի հիմնավորումները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի մեղադրողի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի բողոքները ենթակա են վերադարձման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Հովհաննես Աշոտի Հակոբյանի, Էրիկ Միքայելի Սարգսյանի և Գևորգ Վիրաբի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 28-ի որոշման դեմ մեղադրող Կ.Աղաբեկյանի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Սաքունցի վճռաբեկ բողոքները վերադարձնել:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

*Դատավորներ* Մ.ՕՀԱՆՅԱՆ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ